# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. երկրորդ եռամսյակում

**/վերլուծություն/**

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 49908 գործարքներ, որոնց քանակը 2011թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 19.9%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ` 11.9%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2011թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2011թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12331 օտարման գործարքների 78.1%-ը կազմել են առուվաճառքները, 21.2%-ը` նվիրատվությունները և 0.7%-ը` փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. երկրորդ եռամսյակում, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 22.0%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ` 10.0%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. երկրորդ եռամսյակում, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 38.7%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 21.1%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|
| | երկրորդ եռամսյակ 2010թ. | երկրորդ եռամսյակ 2011թ. | առաջին եռամսյակ 2011թ. |
| Կենտրոն | 472300 | 444100 | 444500 |
| Արաբկիր | 392300 | 344000 | 352200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 290800 | 263700 | 272700 |
| Նոր-Նորք | 244600 | 225400 | 226200 |
| Ավան | 246800 | 234800 | 229400 |
| Էրեբունի | 254600 | 233900 | 235300 |
| Շենգավիթ | 260900 | 229700 | 235300 |
| Դավթաշեն | 279700 | 257200 | 259000 |
| Աջափնյակ | 242300 | 225100 | 221200 |
| Մալաթիա-Սեբաստիա | 250000 | 222000 | 220000 |
| Նուբարաշեն | 146100 | 148400 | 148700 |
| **Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/** | **280000** | **257100** | **258600** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել են 0.6%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 956 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել է 0.7%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 1.7%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | երկրորդ եռամսյակ 2010թ. | երկրորդ եռամսյակ 2011թ. | առաջին եռամսյակ 2011թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 142700 | 130700 | 135500 |
| | Ապարան | 45500 | 49100 | 46500 |
| | Թալին | 53400 | 60700 | 57800 |
| Արարատ | Արտաշատ | 95700 | 96500 | 93000 |
| | Մասիս | 132900 | 122000 | 131700 |
| | Վեդի | 95500 | 92400 | 94200 |
| | Արարատ | 85700 | 80300 | 84300 |
| Արմավիր | Վաղարշապատ | 164700 | 142600 | 150800 |
| | Արմավիր | 122500 | 121300 | 124700 |
| | Մեծամոր | 84600 | 84300 | 84000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գեղարքունիք | Սևան | 95800 | 90600 | 90500 |
| | Գավառ | 47000 | 50100 | 48000 |
| | Մարտունի | 86200 | 89700 | 86800 |
| | Վարդենիս | 33200 | 35100 | 31800 |
| | Ճամբարակ | 19700 | 22700 | 20800 |
| Լոռի | Վանաձոր | 94800 | 91500 | 89800 |
| | Ստեփանավան | 58200 | 66800 | 60400 |
| | Սպիտակ | 80700 | 86600 | 84500 |
| | Ալավերդի | 32000 | 36000 | 33900 |
| | Տաշիր | 36000 | 41400 | 37400 |
| | Թումանյան | 6100 | 12500 | 7300 |
| | Շամլուղ | 3400 | 8000 | 4200 |
| | Ախթալա | 14200 | 18700 | 15200 |
| Կոտայք | Աբովյան | 161900 | 140600 | 144200 |
| | Նոր Հաճն | 130300 | 123000 | 129500 |
| | Բյուրեղավան | 104900 | 106900 | 104300 |
| | Եղվարդ | 116400 | 104200 | 108700 |
| | Հրազդան | 63800 | 59300 | 61000 |
| | Ծաղկաձոր | 181500 | 185300 | 178700 |
| | Չարենցավան | 80000 | 74300 | 76400 |
| Շիրակ | Գյումրի | 121600 | 106600 | 112400 |
| | Արթիկ | 60400 | 64700 | 62500 |
| | Մարալիկ | 30800 | 33500 | 30200 |
| Սյունիք | Գորիս | 139600 | 127100 | 138300 |
| | Կապան | 100200 | 104000 | 101400 |
| | Սիսիան | 80200 | 88900 | 84500 |
| | Մեղրի | 59100 | 67200 | 62300 |
| | Ագարակ | 33600 | 38200 | 35200 |
| | Քաջարան | 60000 | 67400 | 61000 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց Ձոր | Վայք | 72300 | 79100 | 72600 |
| | Եղեգնաձոր | 107300 | 108400 | 109900 |
| | Ջերմուկ | 114800 | 122900 | 122400 |
| Տավուշ | Դիլիջան | 104400 | 106300 | 106100 |
| | Իջևան | 140700 | 128600 | 131500 |
| | Բերդ | 42100 | 48000 | 43000 |
| | Նոյեմբերյան | 33900 | 39000 | 35000 |
| | Այրում | 24100 | 27300 | 24500 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2011թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել են 0.8%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1315 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 362, մարզերում միասին վերցրած՝ 953: 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 35.3%-ով, ընդ որում, Երևանում՝ 49.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 30.7%-ով: 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.3%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 1.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 12.8%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|
| | երկրորդ եռամսյակ 2010թ. | երկրորդ եռամսյակ 2011թ. | առաջին եռամսյակ 2011թ. |
| Կենտրոն | 487900 | 463800 | 469970 |
| Արաբկիր | 399200 | 374300 | 379300 |
| Քանաքեռ-Զեյթուն | 295000 | 275000 | 286200 |
| Նորք-Մարաշ | 287200 | 280800 | 277100 |
| Ավան | 251900 | 240900 | 242100 |
| Էրեբունի | 261200 | 239100 | 241500 |
| Շենգավիթ | 265100 | 239800 | 247800 |
| Դավթաշեն | 286000 | 270500 | 272100 |
| Աջափնյակ | 250100 | 237700 | 236800 |
| Մալաթիա-Սեբաստիա | 251900 | 232000 | 232500 |
| Նուբարաշեն | 148500 | 149600 | 150100 |
| **Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/** | **289500** | **273000** | **276000** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել են 1.1 %-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | երկրորդ եռամսյակ 2010թ. | երկրորդ եռամսյակ 2011թ. | առաջին եռամսյակ 2011թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 150100 | 134700 | 141800 |
| | Ապարան | 50200 | 50500 | 48400 |
| | Թալին | 56900 | 61900 | 58400 |
| Արարատ | Արտաշատ | 101700 | 104200 | 100300 |
| | Մասիս | 136100 | 125900 | 137000 |
| | Վեդի | 99600 | 95000 | 98200 |
| | Արարատ | 93600 | 82700 | 88800 |
| Արմավիր | Վաղարշապատ | 169900 | 160600 | 163600 |
| | Արմավիր | 127300 | 125000 | 131000 |
| Գեղարքունիք | Սևան | 98700 | 94500 | 96100 |
| | Գավառ | 50800 | 51200 | 50800 |
| | Մարտունի | 90000 | 90600 | 88900 |
| | Վարդենիս | 35800 | 37900 | 34200 |
| | Ճամբարակ | 22200 | 25500 | 23000 |
| Լոռի | Վանաձոր | 100400 | 100400 | 98900 |
| | Ստեփանավան | 62600 | 67300 | 63000 |
| | Սպիտակ | 84300 | 93200 | 86500 |
| | Ալավերդի | 35800 | 36700 | 36300 |
| | Տաշիր | 39800 | 45100 | 40800 |
| | Թումանյան | 10700 | 12900 | 10800 |
| | Շամլուղ | 7500 | 9300 | 7700 |
| | Ախթալա | 18200 | 19700 | 18300 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոտայք | Աբովյան | 172900 | 148100 | 158500 |
| | Նոր Հաճն | 136300 | 130900 | 135800 |
| | Բյուրեղավան | 109700 | 108700 | 108700 |
| | Եղվարդ | 128600 | 109600 | 113700 |
| | Հրազդան | 67700 | 64200 | 65200 |
| | Ծաղկաձոր | 312800 | 307200 | 316700 |
| | Չարենցավան | 82400 | 76200 | 79200 |
| Շիրակ | Գյումրի | 126100 | 117500 | 121700 |
| | Արթիկ | 63400 | 65800 | 63300 |
| | Մարալիկ | 33100 | 35900 | 32400 |
| Սյունիք | Գորիս | 145000 | 135800 | 143300 |
| | Կապան | 105400 | 106000 | 106800 |
| | Սիսիան | 85300 | 90200 | 86200 |
| | Մեղրի | 62300 | 68200 | 64700 |
| | Ագարակ | 35700 | 39400 | 36000 |
| | Դաստակերտ | 10500 | 10500 | 10500 |
| Վայոց Ձոր | Վայք | 76200 | 80100 | 74800 |
| | Եղեգնաձոր | 115500 | 115700 | 112500 |
| | Ջերմուկ | 121200 | 125100 | 122900 |
| Տավուշ | Դիլիջան | 110100 | 107900 | 109700 |
| | Իջևան | 144800 | 138000 | 134700 |
| | Բերդ | 44800 | 49700 | 44700 |
| | Նոյեմբերյան | 36200 | 40100 | 36500 |
| | Այրում | 26000 | 28000 | 26100 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել են 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 4147 միավոր /2198.02 հա/ հողեր, որից Երևանում՝ 194 միավոր /93.81 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2138 միավոր /1925.10 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /1.52 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1448 միավոր /136.64 հա/, որից Երևանում՝ 150 միավոր /10.22 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 466 միավոր /108.83 հա/, որից Երևանում՝ 26 միավոր /81.36 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 35 միավոր /9.29 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.71 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 41 միավոր /16.82 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 19 միավոր /1.34 հա/:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 3570 միավորի /1917.78 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 162 միավոր /89.58 հա/, նվիրատվության գործարքներ՝ 530 միավոր /256.01 հա/, որից Երևանում՝ 32 միավոր /4.23 հա/ և փոխանակության գործարքներ՝ 47 միավոր /24.23 հա/:

Հանրապետությունում 2011թ. երկրորդ եռամսյակում, 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.2%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների

քանակն աճել է 5.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 6.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 9.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 409.02 հա, որից 394.23 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 23.0% կամ 821 գործարքներ /480.33 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 11 գործարքներ /1.09 հա/, իսկ 76.3% կամ 2723 միավորը /1434.09 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 149 միավոր /88.47 հա/: 2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 26 գործարք /3.37 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | *Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող* | | | | | | | | *Մասնավոր սեփականություն հանդիսացող* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 3 | 0.54 | 3 | 0.29 | 5 | 0.26 | 12 | 1.37 | 1 | 0.16 | 120 | 7.96 | 16 | 78.98 |
| Արագածոտն | 25 | 43.22 | 1 | 0.07 | 9 | 0.97 | 16 | 1.92 | 143 | 99.82 | 2 | 0.24 | 77 | 9.68 | 5 | 0.22 |
| Արարատ | 36 | 223.69 | 4 | 0.12 | 51 | 3.78 | 13 | 0.09 | 140 | 145.53 | 3 | 4.43 | 148 | 12.23 | 13 | 1.21 |
| Արմավիր | 30 | 80.70 | 3 | 0.53 | 2 | 0.07 | 23 | 0.64 | 170 | 313.54 | 0 | 0.00 | 131 | 12.35 | 12 | 1.20 |
| Գեղարքունիք | 2 | 3.30 | 1 | 0.32 | 25 | 2.57 | 30 | 3.22 | 225 | 136.64 | 0 | 0.00 | 39 | 4.22 | 13 | 0.94 |
| Լոռի | 4 | 0.88 | 4 | 0.15 | 12 | 0.59 | 31 | 0.63 | 303 | 209.95 | 0 | 0.00 | 99 | 12.62 | 17 | 0.96 |
| Կոտայք | 59 | 45.54 | 4 | 1.44 | 103 | 7.66 | 77 | 1.95 | 380 | 139.01 | 0 | 0.00 | 237 | 24.38 | 31 | 1.98 |
| Շիրակ | 2 | 4.39 | 1 | 0.03 | 32 | 1.48 | 35 | 0.77 | 93 | 120.69 | 3 | 0.15 | 42 | 4.65 | 5 | 1.18 |
| Սյունիք | 2 | 4.05 | 3 | 1.05 | 11 | 0.66 | 17 | 0.27 | 62 | 47.10 | 0 | 0.00 | 25 | 2.43 | 12 | 0.33 |
| Վայոց Ձոր | 16 | 29.54 | 0 | 0.00 | 14 | 1.61 | 26 | 0.96 | 34 | 10.90 | 0 | 0.00 | 12 | 0.98 | 8 | 0.33 |
| Տավուշ | 3 | 2.86 | 0 | 0.00 | 43 | 3.48 | 13 | 1.99 | 36 | 17.31 | 1 | 0.004 | 28 | 2.21 | 2 | 0.003 |
| Ընդամենը | 179 | 438.17 | 24 | 4.25 | 305 | 23.16 | 286 | 12.70 | 1598 | 1241.86 | 10 | 4.98 | 958 | 93.71 | 134 | 87.33 |

Ստորև ներկայացվում է 2011թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Աճուրդ վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանա-կության հողերի | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 11 | 1.09 | 3 | 0.54 | 3 | 0.29 | 5 | 0.26 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Արագածոտն | 3 | 0.06 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.06 | 48 | 46.12 | 25 | 43.22 | 1 | 0.07 | 9 | 0.97 | 13 | 1.86 |
| Արարատ | 6 | 0.17 | 1 | 0.06 | 2 | 0.09 | 3 | 0.02 | 98 | 227.52 | 36 | 223.69 | 3 | 0.06 | 49 | 3.69 | 10 | 0.07 |
| Արմավիր | 6 | 0.04 | 1 | 0.01 | 0 | 0.00 | 5 | 0.03 | 51 | 81.69 | 29 | 80.49 | 2 | 0.52 | 2 | 0.07 | 18 | 0.61 |
| Գեղարքունիք | 4 | 0.71 | 0 | 0.00 | 1 | 0.06 | 3 | 0.65 | 54 | 8.70 | 2 | 3.30 | 1 | 0.32 | 24 | 2.51 | 27 | 2.57 |
| Լոռի | 14 | 0.24 | 2 | 0.06 | 6 | 0.09 | 6 | 0.09 | 37 | 2.00 | 4 | 0.88 | 2 | 0.08 | 6 | 0.49 | 25 | 0.55 |
| Կոտայք | 47 | 3.31 | 0 | 0.00 | 32 | 2.65 | 15 | 0.66 | 183 | 48.80 | 46 | 41.06 | 4 | 1.44 | 71 | 5.01 | 62 | 1.29 |
| Շիրակ | 16 | 0.57 | 0 | 0.00 | 8 | 0.46 | 8 | 0.11 | 54 | 6.09 | 2 | 4.39 | 1 | 0.03 | 24 | 1.01 | 27 | 0.66 |
| Սյունիք | 3 | 1.06 | 2 | 1.01 | 0 | 0.00 | 1 | 0.05 | 30 | 4.96 | 2 | 4.05 | 1 | 0.03 | 11 | 0.66 | 16 | 0.22 |
| Վայոց Ձոր | 4 | 0.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.01 | 51 | 32.04 | 15 | 29.47 | 0 | 0.00 | 14 | 1.61 | 22 | 0.96 |
| Տավուշ | 12 | 0.90 | 0 | 0.00 | 7 | 0.22 | 5 | 0.68 | 47 | 7.43 | 3 | 2.86 | 0 | 0.00 | 36 | 3.26 | 8 | 1.31 |
| Ընդամենը | 126 | 8.16 | 9 | 1.68 | 59 | 3.86 | 58 | 2.62 | 653 | 465.35 | 164 | 433.41 | 15 | 2.55 | 246 | 19.28 | 228 | 10.10 |

Հանրապետությունում 2011թ. երկրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 15 գործարքներ /4.74 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. երկրորդ եռամսյակում, 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 23.3%-ով: Ընդ որում Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 23.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 11.8%-ով, բնակելի կառուցապամման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 38.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 13.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 28.6%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2011թ. երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 22 | 34.09 | 62.5 | 4668.9 | 716.9 | 100 | 54.29 | 365.0 | 12000.0 | 4307.9 |
| Ապարան | | | | | | 13 | 5.04 | 86.5 | 2727.3 | 625.9 |
| Թալին | 3 | 9.13 | 75.2 | 212.6 | 110.0 | 22 | 20.33 | 93.6 | 5494.5 | 563.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | 5 | 15.51 | 79.5 | 1000.0 | 208.6 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 30 | 7.71 | 335.1 | 10833.3 | 2565.6 |
| Մասիս | 27 | 103.19 | 63.3 | 1008.1 | 174.0 | 54 | 28.11 | 200.0 | 11904.8 | 2850.0 |
| Վեդի | 9 | 120.50 | 68.0 | 582.9 | 158.9 | 56 | 109.71 | 207.0 | 10795.1 | 1760.3 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 8 | 19.71 | 35.7 | 1630.4 | 316.7 | 78 | 53.17 | 294.3 | 9090.0 | 1514.5 |
| Բաղրամյան | 12 | 47.73 | 67.5 | 696.9 | 131.6 | 41 | 65.49 | 90.6 | 2561.1 | 771.8 |
| Վաղարշապատ | 9 | 13.06 | 60.4 | 592.5 | 234.4 | 48 | 21.48 | 444.4 | 11764.7 | 2915.2 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 177 | 49.27 | 199.8 | 1875.0 | 371.9 |
| Ճամբարակ | | | | | | 2 | 2.40 | 60.5 | 953.3 | 320.0 |
| Մարտունի | | | | | | 10 | 1.80 | 51.1 | 2850.0 | 701.5 |
| Սևան | 1 | 1.20 | 313.8 | 313.8 | 313.8 | 16 | 47.52 | 52.2 | 2134.8 | 289.7 |
| Վարդենիս | 1 | 2.10 | 171.0 | 171.0 | 171.0 | 20 | 35.65 | 41.2 | 2575.1 | 385.6 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 0.14 | 1217.2 | 1217.2 | 1217.2 | 29 | 17.68 | 170.4 | 6424.2 | 792.1 |
| Գուգարք | 2 | 0.52 | 976.9 | 1010.0 | 993.5 | 24 | 5.87 | 234.6 | 6065.9 | 872.6 |
| Սպիտակ | | | | | | 2 | 0.45 | 250.0 | 5555.5 | 688.1 |
| Ստեփանավան | 1 | 0.21 | 1163.3 | 1163.3 | 1163.3 | 20 | 15.80 | 90.6 | 1686.6 | 287.8 |
| Տաշիր | | | | | | 211 | 163.15 | 45.3 | 1384.4 | 147.5 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 25 | 18.70 | 230.5 | 4287.5 | 806.1 | 172 | 43.55 | 279.3 | 11942.7 | 4743.2 |
| Եղվարդ | 6 | 6.92 | 148.6 | 401.5 | 289.1 | 119 | 54.40 | 174.4 | 11971.8 | 3331.6 |
| Հրազդան | 15 | 15.44 | 150.6 | 5155.5 | 979.8 | 53 | 21.64 | 130.5 | 10256.4 | 2041.9 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 20 | 18.53 | 252.0 | 1693.1 | 604.0 |
| Ամասիա | | | | | | 10 | 29.01 | 40.9 | 261.0 | 135.7 |
| Անի | 2 | 4.39 | 426.0 | 431.6 | 428.8 | 12 | 11.37 | 110.6 | 546.9 | 355.2 |
| Աշոցք | | | | | | 38 | 53.65 | 58.5 | 215.8 | 110.2 |
| Արթիկ | | | | | | 13 | 8.14 | 79.4 | 1428.6 | 330.2 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 14 | 14.06 | 92.6 | 1023.2 | 622.8 |
| Կապան | 1 | 3.05 | 494.5 | 494.5 | 494.5 | 6 | 3.83 | 120.0 | 841.6 | 317.1 |
| Մեղրի | | | | | | 15 | 3.17 | 193.0 | 3000.0 | 680.0 |
| Սիսիան | 1 | 1.00 | 165.0 | 165.0 | 165.0 | 27 | 26.04 | 46.3 | 1977.4 | 423.6 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 14 | 27.47 | 63.0 | 663.8 | 267.6 | 18 | 4.96 | 125.0 | 10000.0 | 1790.3 |
| Վայք | 1 | 2.00 | 71.9 | 71.9 | 71.9 | 16 | 5.94 | 58.8 | 1430.7 | 552.5 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 15 | 4.62 | 213.3 | 3783.8 | 630.2 |
| Իջևան | 3 | 2.86 | 3267.0 | 9600.0 | 5378.0 | 4 | 1.14 | 267.5 | 9454.5 | 1185.2 |
| Նոյեմբերյան | | | | | | 17 | 11.54 | 46.7 | 7368.4 | 878.5 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2011թ. երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 7 | 8705.0 | 175.2 | 213.6 | 202.7 | 54 | 50238.5 | 130.7 | 22200.0 | 2572.4 |
| Ապարան | | | | | | 11 | 21930.0 | 124.1 | 609.6 | 325.4 |
| Թալին | 2 | 968.0 | 227.2 | 227.8 | 227.5 | 10 | 20202.0 | 63.2 | 1454.8 | 152.3 |
| Ծաղկահովիտ | | | | | | 2 | 4470.0 | 60.0 | 214.3 | 84.7 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 2 | 2000.0 | 357.0 | 357.0 | 357.0 | 10 | 10900.0 | 173.9 | 7140.3 | 894.0 |
| Մասիս | 47 | 34924.0 | 822.5 | 3252.5 | 1182.5 | 104 | 76897.0 | 187.5 | 25000.0 | 1211.9 |
| Վեդի | | | | | | 34 | 34512.0 | 126.1 | 5000.0 | 662.0 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 1 | 400.0 | 3381.0 | 3381.0 | 3381.0 | 42 | 33294.0 | 131.6 | 9090.9 | 1215.0 |
| Բաղրամյան | 1 | 281.0 | 161.8 | 161.8 | 161.8 | 9 | 11680.0 | 100.0 | 833.3 | 220.8 |
| Վաղարշապատ | | | | | | 77 | 74866.0 | 197.4 | 26528.4 | 1530.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 16 | 19950.0 | 124.4 | 216.7 | 146.1 | 10 | 7445.0 | 186.6 | 1084.3 | 576.0 |
| Ճամբարակ | | | | | | 2 | 2417.0 | 71.3 | 2286.2 | 149.3 |
| Մարտունի | | | | | | 24 | 28599.0 | 119.3 | 5000.0 | 275.8 |
| Սևան | 6 | 3556.7 | 372.6 | 521.9 | 472.9 | | | 240.0 | 3110.4 | 274.3 |
| Վարդենիս | 2 | 1587.0 | 115.0 | 115.0 | 115.0 | 2 | 3079.0 | 72.5 | 987.2 | 150.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 545.0 | 244.2 | 244.2 | 244.2 | 9 | 13290.0 | 114.3 | 1388.9 | 215.3 |
| Գուգարք | 3 | 1464.0 | 79.2 | 3381.5 | 1372.1 | 16 | 14055.0 | 77.9 | 14083.3 | 959.1 |
| Սպիտակ | 2 | 2910.0 | 47.9 | 49.2 | 47.9 | 63 | 82019.0 | 104.9 | 1348.3 | 200.0 |
| Ստեփանավան | | | | | | 4 | 4395.0 | 88.2 | 1666.7 | 173.2 |
| Տաշիր | | | | | | 5 | 7880.0 | 45.3 | 400.0 | 86.6 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 34 | 20995.7 | 344.1 | 4976.9 | 2821.1 | 118 | 147487.9 | 264.5 | 35353.5 | 1971.2 |
| Եղվարդ | 35 | 27642.0 | 1254.6 | 5100.9 | 4040.5 | 101 | 79755.0 | 173.6 | 27000.0 | 2839.5 |
| Հրազդան | 2 | 1435.0 | 1962.2 | 2977.5 | 2469.9 | 15 | 14120.0 | 117.7 | 34848.5 | 1323.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 17 | 5840.0 | 246.4 | 6693.2 | 2637.5 | 18 | 11069.8 | 113.6 | 18750.0 | 331.6 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | 3 | 2700.0 | 233.1 | 465.0 | 310.4 | 4 | 5081.0 | 67.9 | 180.6 | 149.1 |
| Աշոցք | | | | | | 4 | 11000.0 | 40.8 | 144.0 | 60.3 |
| Արթիկ | 4 | 1600.0 | 65.6 | 200.0 | 133.6 | 16 | 19319.0 | 111.8 | 5000.0 | 216.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 4 | 2040.0 | 891.0 | 891.0 | 891.0 | 7 | 6024.0 | 112.2 | 1700.0 | 366.7 |
| Կապան | 1 | 111.6 | 3542.9 | 3542.9 | 3542.9 | 5 | 5920.0 | 67.9 | 2638.9 | 280.3 |
| Մեղրի | 5 | 3814.0 | 283.9 | 605.2 | 447.8 | 5 | 7223.0 | 68.5 | 632.9 | 177.8 |
| Սիսիան | 1 | 620.0 | 303.6 | 303.6 | 303.6 | 8 | 5149.0 | 123.5 | 875.0 | 187.8 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 14 | 16122.0 | 255.3 | 752.5 | 508.3 | 11 | 9384.0 | 96.7 | 7659.6 | 497.2 |
| Վայք | | | | | | | | 120.7 | 1448.3 | 192.3 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | 3 | 3300.0 | 160.0 | 160.0 | 160.0 | 2 | 2540.0 | 75.8 | 810.0 | 101.8 |
| Իջևան | 31 | 29142.0 | 242.3 | 3000.0 | 2540.6 | 22 | 15587.0 | 74.1 | 14423.1 | 506.2 |
| Նոյեմբերյան | 2 | 183.0 | 1100.0 | 1100.0 | 1100.0 | 2 | 2020.0 | 125.0 | 1948.1 | 204.8 |

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 17 գործարքներ 4.90 հա մակերեսով, ընդ որում 3-ը` /0.22 հա/ Կոտայքի, 2-ը` /0.18 հա/ Լոռու, 11-ը` /4.45 հա/ Տավուշի և 1-ը` /0.05 հա/ Արարատի մարզերում:

2011թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2304 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6%: Ընդ որում, վարձակալության գործարքների 86.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. երկրորդ եռամսյակում, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 13.4%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել` 22.3%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 137 բնակարանների, 83 անհատական բնակելի տների, 1122

հասարակական նշանակության, 206 արտադրական նշանակության օբյեկտների, 1 այգետնակ, 729 միավոր /4484.63 հա/ հողերի և 26 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 34 վարձակալության գործարքների, այդ թվում 21 միավոր /0.03 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2011թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 6.3%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 19.0%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 4484.63 հա հողերից 1.68 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4482.95 հա հողերի 115.66 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 142.01 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 1942.77 հա, որից 1861.09 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալվել են 4203.22 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

| **Մարզի անվանումը** | **Վարձակալության գործարքների քանակները** /միավոր/ | **Վարձակալված հողերի մակերեսները** /հա/ |
|---|---|---|
| Արագածոտն | 21 | 122.19 |
| Արարատ | 39 | 1037.17 |
| Արմավիր | 11 | 63.47 |
| Գեղարքունիք | 103 | 370.23 |
| Լոռի | 50 | 1861.09 |
| Կոտայք | 19 | 503.78 |
| Շիրակ | 32 | 60.51 |
| Սյունիք | 55 | 147.02 |
| Վայոց Ձոր | 12 | 35.02 |
| Տավուշ | 7 | 2.94 |
| **Ընդամենը** | **349** | **4203.42** |

2011թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7359 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել է 38.4%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 25.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.9%/, առանձնատների /26.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.8%/ և հողերի /11.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3267 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 39.4%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 19.9%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 5415.91 հա հողեր, որից 121.00 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.9%-ը, կամ 5249.00 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.31 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 4839.58 հա, որից 4835.66 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 638 գործարքներ, որից 471-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 82.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 14.4%-ը՝ անհատական բնակելի տների, 1.1%-ը՝ հասարակական

նշանակության օբյեկտների, 0.9-ական%-ն՝ այգետնակների և հողերի, 0.2-ական%-ը արտադրական նշանակության օբյեկտների, ավտոտնակների և գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: 2011թ. առաջին եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 29.4%-ով, ընդ որում Երևանում՝ 26.3%-ով, մարզերում միասին վերցրած՝ 39.2%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 25.8%-ով, ընդ որում Երևանում՝ 26.6%-ով, մարզերում միասին վերցրած՝ 23.7%-ով:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 8501 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2011թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 27.8%-ով, իսկ 2010թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 31.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /26.3%/:

***ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***